ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի, 13-րդ հոդվածի ութերորդ մասի 5-րդ և 15-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.1 կետի 3-րդ ենթակետի, 7.4 կետի 2-րդ ենթակետի, 7.5, 7.6, 7.7, 7.8, 12.1, 12.2, 13.2, 14.1, 14.2 կետերի, ինչպես նաև 17.3-րդ կետի 5-րդ և 27-րդ ենթակետերի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2021 թվականի սեպտեմբերի 12-ին (կիրակի օրը), ժամը 09^{30}-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցով.

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն:***

2. Սահմանել, որ՝

2.1. Օրակարգային հարցով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2021 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 09^{30}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17^{30}-ին.

2.2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2021 թվականի օգոստոսի 15-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի օգոստոսի 20-ին (ներառյալ).

2.3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2021 թվականի օգոստոսի 21-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 18^{00}-ին:

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի

2 օգոստոս 2021թ.
թիվ 150-Լ

ծանուցման ձևը՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- *ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան փողոց 7-2) հայտարարությունների ցուցատախտակին ծանուցումը հրապարակելու միջոցով.*
- *օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

2 օգոստոս 2021թ.
թիվ 150-Լ
ք. Երևան